

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ»
Աղեփսանգրիա



S. Bural.
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԷԳԻՊՏՈՍ
Ղր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25
—
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ՓԻԻԿՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ֆր. 8
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ԴՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ

20 ՅՈՒՆԻՍ 1901

ԹԻԻ 7

ԱՆԱՔԱՅԵԼԻ ԽԹԱՆԸ

Գահիրէի «Արշալոյս»ին տնօրէնը վերջերս Աղեփսանգրիա իջած էր, մանր ու խոշոր գործերու կարգադրութեան համար. տեսանք զինք սրբաւարանները, մերթ փոքրոցներն ու մերթ տունները, Սահմանադրութիւնը Հայոց նորատիպ տեսարակէն ծրար մ'անթած, քրտնաթոր կը վաղվզէր աջ ու ձախ, ջանալով օր առաջ սպառելու Հրասարակցական (° °) ընկերութեան այդ անդրանիկ հրատարակութեան հարկերու օրինակները, ու, գոնէ այս կերպով ծաւալելու եղիպտոսացի եւ Արտասահմանի հայ գաղութի բոլոր խաւերուն մէջ սահմանադրական սկզբունքները:

Շիտակը գովելի են այդ ջանքերը, և, քաջալերանքի արժանի, — թէ եւ լաւ խորհուած անհատական շահերու վրայ հիմնուած ըլլան անոնք — քանի որ անուն Փրոնիսիակոսի կը գոստուեն:

կը թելադրէ մեզի ներկայ յօդուածը, որուն վրայ կը դարձնենք Փիիհիկի ընթերցողներուն ուշադրութիւնը:

Օտմանեան պատմութեան քիչ թէ շատ հմտութիւն ունեցողները պէտք է գիտնան թէ՛ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը կ'սկսի 1453ին, Պրուսայի Առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոսէն, որ Փաթիհի հրովարտակով հաստատուեցաւ Կ. Պոլսոյ առաջին Պատրիարք: Յովակիմ ու իր յաջորդները, իբր միջնորդ Դրան ու Ազգին միջև, երկար ատեն ազդը կառավարեցին քրտնաճ, անսահման ու անկախ իշխանութեամբ մը: Յետոյ կուգայ Անիոյ գասակարգը, Ակնայ բարեփոխիկ սեղանաւորներէն բարկացած, որ տակաւ տիրանալով միջավայրին, ձեռքի մէջ ունենալով Դրան բոլոր պաշտօնեանները, կը մօտենան կամաց կամաց Պատրիարքին, կ'սկսին խոչնդականի դեր կատարել, կրօնային ու քաղաքային այլ եւ այլ խնդիրներու կարգադրութեանը մտանակցի ու 'կ վերջոյ իրենց ազդեցող:

վրայ, շնորհիւ իրենց բացառիկ դիրքին ու օգտուելով Պատրիարքներու ապիկարութենէն: Այդ ազդեցութիւնը տարիներու ընթացքին մէջ փոխուեցաւ բացարձակ բռնապետութեան, որով կը վարէին իրենք ազգային գործերը: Պատրիարքը կուռք մ'էր, խաղալիք մը, զոր կը խաղցնէին իրենց մատնետուն վրայ:

Գալով դաւառներուն, հոն ալ կը գործէին ամիրաներուն գործակալներն ու արքանեակները, գանձումներ կատարելու համար: Բաշակերուն, գայմագաւններուն մուրհակաւոր պարտքերը, զոր կնքած էին Ամիրայ սեղանաւորներուն հետ, երաշխիք մ'էին արդէն ասոնց արքանեակներուն առանձնաշորհեալ դիրքին ու գործադիր իշխանութեան: Ասոնք անխտիր կը գործէին անլուր խժդժանք, առանց խտրութեան ցեղի կա՛ր դաւանութեան:

Դաւառներուն Առաջնորդները բնականօրէն խաղալիքը դարձած պիտի ըլլային ամիրայական գործակալներուն, որոնք ամեն բան էին հոն...

Ստեփաննոսի կը յաջորդէ Յակովբոս, 1839ին, կռիւր կը պայթի Ամիրաներուն ու Էսկաւեւերուն միջև. կռիւ, որ տարիներ կը տևէ, մինչև որ 1844ին Մասքեդոսի օրով Ամիրաներուն իշխանութիւնը կը հասնի բռնութեան զենիթը: Ժողովուրդը. պարկեշտ արհեստաւորներէ առաջնորդուած, անարգ լուծը թօթուել կ'ուզէ այդ ինքնակոչ ազգապետներուն ու իր իսկ հաւանութեամբ նոր մարդիկ կ'ընտրէ ազգային գործերը կառավարելու համար Պատրիարքին հետ: Վերջապէս ժողովուրդը կը յաղթէ, շուտով կը կազմուին երկու ժողովներ, Հոգեւոր ու Կերպարան, առաջինը 14 եկեղեցականներէ երկրորդը 20 աշխարհականներէ բաղկացած: Այս երկու ժողովները, 1847ին Սուլթան Մէհմետի հրովարտակովը վաւերացած, աստիճան մը կը սահմանափակեն Պատրիարքական իշխանութիւնը, մինչդեռ, Պատրիարքութիւնն այ իր կարգին, սանձ

թեան, երբ 1844ին Պատրիարք ընտրուած էր Մատթէոս:

Սակայն այդ երկու ժողովները, տեղի տալով յաճախ զանազան զեղծումներու, անբաւական եղան պաշտպանելու ժողովուրդին շահերն ու իրաւունքները: Դժգոհութիւնը կ'աւելնար, ու տակաւ կ'ստանար ընդվզեցնող համեմատութիւններ: Պէ՛տք էր փլցընել հին շէնքը, թաղել փուտ, ու ծաղրելի գաղափարները. յուսաւորեալ ու խաւարեալ երկու թշնամի կազմակերպութիւն, տարիներով զիրար նախատել, զիրար հալածել, զիրար բռնազրկտել, զիրար աքսորել ու մինչև իսկ սպաննել փորձեցին, մինչև որ հնչեց վերջապէս ցանկալի ժամը:

Ֆրանսա կը թուած, Ֆրանսայի ազատ ու առողջ սկզբունքներն որդեգրած հայ տաղանդներ, Տօգդ. Ռուսինեան ու Սէրվէչէն, իրենց հետ ունենալով Տօգդ. Ստ. Ասլանեանն ու գրագէտ-վարչագէտ Օտեանը, գլուխ դրին տուին, ամիսներով, տարիներով գրեցին, արեցին, նորէն գրեցին ու երևան բերին Աշգ. Սահմանագրութիւնը:

Ասդին, աւելի գործնական հանճար մը, անմահն Գրիգոր Աղաթօն, ինք ի՛ր սեփական ուժով ու հեղինակութեամբ, սկսած էր Կիլիկիան սերտել, մշակել ու հուսկ ուրեմն, սիրել ու պաշտել: Մարաշի մէջ մուսուանդ միւսթիի մը գրգռիչ քարոզներով ողակէզ կը նահատակուի Անգլ. հրւպատուր Պ. Գուրմէն, իր յղի կնոջ ու մատղաջ զաւակներուն հետ 1857ին. իսկ Աղաթօն, 19^{րդ} դարուն միակ Մեծ Հայ հանճարը, Չեթուն կը զրկէ մասնաւոր ուսուցիչ մը Պ. Խաչատուր Իւթիւճեանը, եղբայր Տօգդ. Մանուէլ Իւթիւճեանի, որ հոն, քաղքէն դուրս, աշակցութեամբ լեռնական մեծահարուստ Պալճեան Կերդաստանի պետ Մհի. Հալւոր բարերարին, կը կառուցանէ ճեմարան մը, լեռնցիներուն տալու համար բարձր կրթութիւն մը: Այդ ուսուցիչը սակայն,


այնքան ժիր, կը մեռնի 1859ին և կը թաղուի Զեթունի Ս. Յովհ. Եկեղեցին:

Պէ՛տք էր ընել այս փոքրիկ շէղումը, Փիւնիկի ընթերցողներուն պարզելու համար թէ՛ կէս դար առաջ ինչե՛ր կը խորհէին մեր ջոջերը, ազգին բարօրութեան և ապագային համար. այս շէղումը թող առիթ ըլլայ բարդատուութեան դնելու այն անմահ մեռելներն ու արդի մեռեալ կենդանիները...

Շարունակելի

ՍԻՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ



Պ. Ժօզէֆ Մօսրրի, ելեկտրագէտերկրաչափը Սիօնական Պառ Գօշրա գլխւպին մէջ ԳօնՔէրանս մը տուաւ Սիօնականութեան ու իր նպատակին վրայ:

Պ. Մօսրրի՛ Սիօնական շարժումին նախագահողներէն մէկն է. և խորապէս համոզուած է Սիօնականութեան նպատակին իրականացման կարելիութեանը մասին: Բարիզ գտնուած ժամանակ, իր հանգիստի ժամերէն օգտուելով, յաջողած է իր շուրջը խմբել ամբողջ երիտասարդութիւն մը զարգացած, խելացի եւ հաստատապէս վրձնուած՝ ամեն բան զոհելու ՚ի նպատակ այն ազնիւ դաղափարներուն, զոր տպաւորած է անոնց միտքին մէջ, շնորհիւ իր եռանդուն ջանքերուն, յորդորներուն ու բազմաթիւ յօգուածներուն զոր հրատարակած է իր ծախքով հիմնուած և երևցող լրագրի մը մէջ, և մանաւանդ, շնորհիւ այն իրերապաշտպան հայրենասիրութեամբ թրթռուն ճառերուն զոր առիթը՛ էր փախցնել արտասանելու երիտասարդական գումարումներու մէջ: Սիօնականները, որոնք ցրուած են հողագնտին ամեն կողմը, զինք համբաւէն կը ճանչնան, հետեաբար ունկնդիրներու մեծ բազմութիւն

համար մեծ հայրենասիրին խօսքերը:

Պ. Մօսրրի շատ ձեռնհասութեամբ ներկայացուց հարցը. իր մէն մի հաստատումը կը հանգչէր ճշգրիտ ու բազմաթիւ իրողութեանց վրայ եւ չ'կար փաստ մը, որ տրամաբանութեան մեղանչէր:

Ահաւաստիկ սակայն իր ճառին վերլուծումը.

Սիօնականութիւնը՝ Յոյսն է որ ճամբայ ինկած է դէպ ՚ի իրականացումը. երա՛զն է որ իրականութեան թարգմանուելու շաւիղին մէջ է մտած. Յոյս՝ զոր չը դադրիր փայփայելէ իր սրտին խորը հրէական տարաբազդ ժողովուրդը, վերակազմելու համար հինն Սիօնի հողին վրայ իր ազգային միութիւնը, որ խորտակուեցաւ երկրորդ Տաճարին կործանման հետեւեալ օրը:

Եւ բանախօսը՝ հեղինակաւոր անձերու և միջնադարեան հրէայ բանաստեղծներէ յիշատակութիւններով եւ ճշգրիտ իրողութիւններով առիւ պատմական տեսութեան մը մէջ նշանակեց այլազան փուլերը այս Գաղափարին բարեշրջութեան, Գրիստոնէութեան առաջին դարերէն սկսեալ մինչեւ մեր օրերը:

Բայց մինչև մեր օրերը հասնելէ առաջ, աւելցուց, Սիօնական Գաղափարը, հագնելու համար իր արդի ձևը, կանգ առած է, թերևս միակ անգամն ըլլալով, շնորհիւ պատմական գլխաւոր դէպքերու, զոր կ'արժէ յիշատակել:

Խօսեցաւ, հետեաբար այն Գաղափարներու հոսանքին մասին որուն կը նախագահէր Մօիս Մէնտէլսըն փիլիսոփան. բացատրեց թէ ինչպէս հրէաները, յուսահատած Փրկիչէն որ կը յամենար դալ զիրենք ազատելու, լքին իրենց վաղեմի յոյսերը, եւ աչքերնին դարձուցին դէպ ի ուրիշ նպատակ մը զոր իրենց կը գծէր Մէնտէլսըն: Այս փիլիսոփային տեսութիւնը կը կայանար հետեւեալ բանաձևին մէջ. «Չոհեցէ՛ք ինչ որ ձեզի կը կապէ անցեալին եւ

Քրիստոնեաներուն, և ապագային Կազախներուն յարեցէ՛ք»:

Սակայն այս ռիսիկներ չը լուծեց հրէական հարցը. իբր արդիւնք միայն ունեցաւ Մէնտէլսընի աշակերտներու բողոքականութիւն ընդունելը: Բայց ահա՛ Մեծ յեղափոխութիւնն որ կը պայթի 89ին, զարմացնելով տիեզերքը, ա՛յնքան իր յանդգնութեամբ որ՛քան արտակարգ վեհանձնութեամբն այն զգացմանց որոնք զայն յղացան: Պ. Մօսքոբի համեմատ, այս ընկերական Դէպքն իբր առաջին հետեանք ունեցաւ տիեզերական ազատականութեան ծնունդը, եւ իբր երկրորդ հետեանք՝ եւրոպական ազգայնականութեան (nationalisme) քաջակերումը: Տիեզերական ազատականութեան հետ, Սիօնական գաղափարը կրնար իր ուժը կորսնցնել, դժբաղդաբար, նոյնացումի կողմնակիցներուն համար պատրանք մ՛եղաւ: Յոյց տուաւ թէ՛ այդ ազատականութիւնն ի՛նչ տխուր վիճակի մէջ կը գտնուի եւրոպայի այլազան երկիրներուն մէջ. շատ ուժեղ օրինակներով ցոյց տուաւ թէ՛ Հրէաները սխալ հաշիւ մը բրած կ'ըլլան վստահելով եւրոպայի քրիստոնեաներուն վեհանձնութեանը վրայ որոնք, վերջապէս, ազատ են իրենց համակրութեան մէջ:

Սակայն ազգայնականութեան վերնալն իբրև հետեանք առաջ կը բերէ անձնական միջավայրէն հեռացումը՝ ամեն օտար տարրերու: Արդ, Հրէան օտար տարր մը մնացած է այն ժողովուրդներուն մէջ ուր կ'ապրի. ուրեմն հրէական խնդիրը սեղանի վրայ դրուեցաւ հակառակ Փրանսական Յեղափոխութեան: 1882ին էր որ Ռուսիոյ մէջ հակահրէական ծանր խռովութիւններ պատահեցան, բազմաթիւ հրէաներ ջարդուեցան Մուսկոններու հրոսներէ. հրէաներու տուները գրաւուեցան, կիներն ու մանկամարդ աղջիկներն ամենէն նուաստացուցիչ անարգանքներու առարկայ եղան, և ՚ի պսակումն այս վայրագութեանց, վաճառանոցները,

կրպակները կողոպտուեցան, թաւան եղան:

Ռուս կառավարութիւնը պարզ ականատես եղաւ այս ամենուն, ու, հակառակ եւրոպական ազատական մամուլի աղաղակներուն, յանցապարտները ո՛չ իսկ փնտաւուեցան:

1882ի խռովութիւնները վճուեցին Ռուսիոյ հրէայ մտաւորական երիտասարդութիւնը թողուլ Համալսարանն ու երթալ Պաղեստին, հողը հերկել պարզ դիւղացիի մը պէս: Ատի առաջին քայլն էր որ առնուեցաւ Սիօնական գաղթականութեան: Այս եռանդուն և երիտասարդ գաղափարականներն ի՛նչ գտան Պաղեստին, տրտում անապատ մը, դարերէ ՚ի վեր անմշակ հող մը, մահաբեր տենդեր, եղտիւրներու պատճառաւ որ հոն կը վխտան: Սակայն հաստատուեցան և արմատ բուսեցին: Նշանը տրուած էր ուրեմն Սիօնական Շարժման:

Ամեն կողմէ հրէաները սկսան Պաղեստին խուժել, հողագործական գաղութներ հիմնուեցան. Պ. Պառօն տը Էտուար Բօչիլտ գլուխն անցաւ այս շարժման եւ 60 միլիոն ֆրանգի մօտ գումար մը ծախսեց Պաղեստինի մէջ հողեր, դնելու և զանոնք բարւոքելու համար: Եթէ քանի մը գաղութներ կազացին ու անհետացան, ուրիշներ հաստատուեցան և յաջողութիւն գտան:

Սիօնականութիւնն իր զուտ գործնական ձևին մէջ էր, երբ Տօգդ. Հէրճ սկսաւ ուսումնասիրել խնդիրը: Քանի մը տարի ետքը, եռսէկսրաաթ տիտղոսով գիրք մը հրատարակեց, ուր նշանաւոր լրագրագետը Պաղեստինի մէջ եբրայական Պետութեան մը ստեղծման գաղափարը կը յայտնէր: Այս գործը մեծ ազմուկ հանեց ու եւրոպական մամուլին մէջ բուռն վիճաբանութեանց տեղի տուաւ: Այլ հակառակ յարձակման եւ քննադատութեանց որոնց առարկան եղաւ ան, գրքին պաշտպան մայր գաղափարն իր ճամբան առաւ: Տօգդ. Հէրճ եւրոպա ճամբորդեց, յաջոցեցաւ համոզելու մեծանուն անձնաւորութիւններ որոնց մէջ պէտք է յի-

չատակել ամենէն առաջ, Տօղդ. Մաքս
Նօրոս, հեղինակ պայմանագրական
սուտերու:

Այս երկու Տօղդորները միասին
յղացան ու կազմակերպեցին Գօնկրէ
մը, ուր գրեթէ բոլոր Սիօնական Գա-
ղափարին համակիրները մասնակցեցան:
Փոքր տուրք մը գրուեցաւ 100 ընտ-
րողի համար Սիօնական պատուիրակի
մ' ընտրութեան իրաւունք ստանալու
համար: Առաջին Սիօնական Գօնկրէն
տեղի ունեցաւ 1898ին, և իր նիստերը
գումարեց Պալի մէջ: Այս Գօնկրէսին
մէջ հրէական պահանջումներն ու ըզ-
ձանքները քիչ որոշ կերպով բանաձե-
ուեցան, սակայն քօթքականացի մի-
ջոցները նշանակուեցան, ու Եւրոպայի
ինչպէս Ամերիկայի համար առիթ մը
ներկայացաւ Սիօնական շարժումը գիտ-
նալու:

Երկրորդ Գօնկրէին մէջ պատուի-
րակներու թիւը կրկին էր: Այս Գօնկ-
րէին մէջ է որ ահա՛ ստեղծեցին Հրէ-
ական Գաղթային Իրամատուհը: 1900
ին Լոնտոնայի մէջ տեղի ունեցաւ եր-
րորդ Գօնկրէն ուր միլիոններով ան-
գամներ արձանագրուեցան:

Պ. Մօսքրի իր ճառը վերջացուց
այսպէս. «Այս խօսու-ըռտու քին եզրա-
կացութիւնն անհրաժեշտ է մեզի ի-
տէալ մը եւ գործնական հայեացքներ
ունենալ:

Այս իտէալը կենսական է, ամեն
մարդու իտէալն է, անհրաժեշտ է: Ա-
ռանց իտէալի մարդը, արդարեւ, մար-
մին մ' է առանց հողի, սիրտ մ' է ա-
ռանց շունչի, սիրտ որ ա' չը բա-
բախեր:

Եւ մեր իտէալը պէտք է ըլլայ մեր
ժողովուրդին ազգային վերածնութեան
աշխատիլ, նոր Սիօնի մը գահակալու-
թեան գէպքը պատրաստել. Սիօնին
որ վիշտին մէջ ծնաւ, տառապանքնե-
րու մէջ աճեցաւ, և որ հզօրապէս մըխ-
ուած է կենսական և աննկուն կորով-
ներու ազբիւրի մը մէջ: Անշուշտ, մեզ
համար չէ՛ որ կ'աշխատինք, բայց մեր
պատինն ու մխիթարութիւնը պիտի ըլ-

լայ յաւէտ, աշխատիլ մեր թողան թո-
ներուն երջանկութեան համար:

Այս է մեր միակ սփոփանքը, կ'ը-
սեմ: Որովհետեւ շատ պէտք ունինք
մխիթարուելու, որովհետեւ բառական
տառապած ենք, բառական հեկեկած
ու արտասուած՝ օտար հողի վրայ: Արդ,
ժամանակ է երթալ ձեռք առնել մեր
տաւիղներն ու քնարները որոնք, լուին
ու տրտուիմ, լքուած են Բարեւոյնի մէջ,
դետափին վրայ, ուռիներուն տակ, և
անոնց ներդաշնակ ու քաղցր խաղերով,
երգել մօտալուտ օրը, ուր մեր հալա-
ծական ժողովրդին համար պիտի նշուի
Ազատութեան աստղը պաղպաղուն:

Ա. ձ.

ՏԸ ԼԷՍԷԲՍԻՆ⁽¹⁾

Արձանին սակ, հոգեւարտու, երկիւղած
Միջերկրականն ու Կարմիրը գրկուած,
Դարավերջիկ երգը կ'երգեն անպասխաւ,
Երգը Եանուս, երգը Իրաւին վեհախաւ:
Շողիներու սուրճիկն մեզ անդաբում,
Նսսած լրսիկ, ցաւերու գիտիլ սրտու,
Յուրս, անգորով կակներեւ մեկուսի,
Հեռի՛ քովի՛լ քարքիներեւ ալ կուսի,
Հրդեհին մեզ վերջաբուսին ընկղւած,
Հովերուն հետ հորիզոնին անպաւած,
Սուրալ կտել կ'ուզեւ Պարապն ու Նիւրիկ
Կուպարեւ զուրս քափել խոկեւ իւ խրքիկ...
Խրքի՛ն խոկեւ փոքորկասանց ըղեղի,
Տափ տափ արիւն, արցունք ալի ու լեղի
Թափուած՝ անմեղ կակներեւ անասակ,
Դիեր՝ նեռուած Մարմարային այն յասակ.
Բիրի, շախի, էաքաղանի հարուսներ
Իցած՝ գլխուն մայրերու որ ևն' եւ ծներ.
Երախաներ բռնաբարչիկ՝ արգանդե,
Կախաղանք հանուած սարունդր բակեւ.
Լեզուն դեռ ևնր բացուած սրզոց ու ծրծկեր՝
Մըսագործի կեռեւ կախուած իրաններ.
Հուր հաւքուրի մը սակաւին անկերձիկ
Երկնոս այտեր՝ զկած կուսի՛ գեղեցիկ...:

Արձանին սակ՝ արձանացած կամ հիւսակ,
Սե'ւ սեւ յուշիւ պուշի հոգիկ իւ հանակ,
Ա' չ' էւլ դիտեր հրդեհը՝ որ կը մարի,

(1) Այս երբուածը գրուած է Բօր Սա-
լիի Լեւեբսի արձանին սակ:

Մ. Խ.

Ո՛չ աչ անպերը ծիրակի կանարի.
 Կոնակներուն կոծուեր չ'եմ լրսեր ես,
 Զ'եմ աչ խըշդիւր աչերս ծովի յոյսերէս.
 Կանչիկ վրայ նագեղանեմ շրջիկներ՝
 Երջագգեսի շրջիկնով չ'ե՛ն գիս լնգեր.
 Անբոխ լը հոն կը խըլլըրսի ու կ'եռայ,
 Զոյգեր կուգան կ'երբան մայրիկն այն վրայ.
 Իսկ ես յառած՝ անծանօթիկ, դեպ հիշիս,
 Կ'երագեմ ի՛մ յեռներ, Տօրն ու Մասիս.
 Հորիզոնէն անդին կ'զգամ նշմարել
 Մոխրակոյսը քաղաքներուն. աւարել
 Տրուած շե՛ն շե՛ն աւաններուն, գիւղերուն
 Տե՛ւք. ծերեր ծընկով կըբոս, երեւուն,
 Փողոցները մարած ինկած, շունչ յետին
 Արձակելով դաշունիկն սակը Բուրսիկն... :
 Ահա՛, ահա՛, տղանցութիւնը կարգով
 Աղջիկներուն, որ կը սարուին Քեզին քով,
 Պիղծ Հարեմը շեկցընէր. յափիզող
 Բոցերուն մեջ՝ օրօրցնէ՛ր սեւասփոյ.
 Մասաղ ճիչերն ըղէղիս նե՛րս կը հոսին.
 Արիւնէ՛ս եմ, ջիղերուս հետ կը խօսին:

Արձակին սակ չը բարսիսիւր ա՛յ իմ սիրս.
 Ժայռիկն ոսքը ձրգուած դիակ մ'անխըլիս,
 Դեռ կը փորձեմ շնչել, ապրի՛չ կ'ուզեմ դեռ,
 Ապրիչ, սակիչ անսանելի կեանքիս քեռ.
 Այիկներէն յաւառութիւն ժառանգած,
 Պիսի փրփուր ժայթիւմ, մաշեմ անկասկած,
 Ապառաժները ծովափին անողոք,
 Ծաղրողները դարերուն քիւն ու բողոք... :
 Սրացե՛ք, անցե՛ք, ծովաբժիւնէ՛ր սուշելով,
 Ծո՛ցը մըքեք նաւակային անվըրդով.
 Տըւե՛ք, առե՛ք քեռներ, սարե՛ք հեռասան,
 Թրղիւսուցե՛ք գանձերով գիւղ ու ուսան.
 Բաղափակիրք ազգերու դուք՝ սուրհակդակ,
 Երջան քեք երկրագունքը բովանդակ,
 Դարձե՛ք, նոր նոր պաշար քեքե՛ք ու ապրանք,
 Թո՛ղ բազմական, անստանան գործարանք.
 Ծանախները բո՛ղ մօտեկան, միական,
 Պարսիկ, Հնդկիկ, Զին ու Ծաբուն, Ասիան՝
 Երոպային ըջեմարան անըսպառ,
 Դրոները բա՛ց բողոքն, անվե՛րջ տուր եւ առ.
 Միքե՛ք սաի չե՛ր նըպասակը վրսեմ,
 Տը Լեւեքսիկն, որուն ձա՛յնը կը լրսեմ,
 Հօ՛ւ, երբ ծովը կը նետուի գի՛րկը ծովին,
 Ու տուրիղը նե՛րս կը խուժէ խմբովին... :

Արձակին սակ ո՛ղջ ողջ քաղուած Յո՛յսը կայ.
 Հինգ դարերու հեծող Հայուն Յոյսն ըսկայ.
 Մըվե՛ք, Մըվե՛ք, պարանոցիդ կուռ շրդքան
 Զը փակի՛ն. վի՛զն անցուցին Հայութեան.
 Դո՛ւն հարքեցիր Հնդկաստանին ուղի՛ն սեւ,
 Ու մուր պատեց Հայաստանին սո՛ւրբ արեւ.
 Ա՛խ, նըզովներ՝ Բաղասիարին այն անգուր,
 Որ Լեւեքսի ըղէղին մեջ գրսու մուս.
 Ահա՛ններն զայսպէս ինչ քաղաքի՛ն

Զարագուշակ ջրանցին հարեւար, որ ապա
 Շահու, Մանգի արիւնջադախ կրֆերուն
 Արշաւակ մը սայիւր ազաս, ոգորուն:
 Է՛ն, երջանիկ ազգերու սեզ որդիներ՝
 Թո՛ղ ծնկագուն, գլխուդ հիւսէն դափնիներ.
 Թո՛ղ մըսաբշուր վաճառական դասակը՝
 Ըզնայրակնով պաշտ քու բարձր հասակը.
 Գաղթապաշիկ պետութիւնները յաղթող՝
 Արձակդ անեղծ պահէն, դարուց դեմ կորող.
 Պատուանդանիդ ուղղե՛ք սակայն պան մ'ակ-
 նարկ,

Արձա՛ն, Հա՛յ մը կ'սպասե հոն, չե՛ անարգ.
 Ո՛չ ա՛յ վարժ է մուրալու գուրն անցորդին.
 Ազատութեան տեկնով հայող յեռնորդին՝
 Կ'աղօթե որ Նիրհող Առիժն արբընեայ,
 Հայութիւնը վերականգնի. Նո՛ր Հըսկայ... :

Ս. ԲԻՒՐՍ

Ք Ր Ո Ն Ի Կ

Ս. Զ Գ Ա Յ Ի Ն

— Ազգ. վարժարանի հարցաքննութիւնները սկսան երկուշաբթիէն և ամբողջ շաբթուան մէջ շարունակեցին, ամեն օր առաւօտեան ժամը 9էն մինչեւ 12 և երեկոյեան ժամը 3էն մինչեւ 6: Հարցաքննութեանց միշտ նախագահեց Սրբազան Առաջնորդը, բաց ՚ի չորեքշաբթի օրէն, որովհետեւ գործի մը համար Գահիրէ դնաց: Յաջորդ օրը վերագառնալով դարձեալ ներկայ գլխունեցաւ ամեն ժամանակ, չըճապատուած եկեղեցական դասէն. Տ. Տ. Վահրամ, Դանիէլ եւ Բարթողիմէոս վարդապետներէն ու երկու բահաններէն որոնցմէ մին, Տ. Յարութիւն Յակովբեան, կրօնագիտութեան ուսուցիչ է: Փիւնիկի Տնօրէնն ու խմբագիրներէն մին բոլոր ժամերուն ներկայ գտնուեցան, յատկ գաղափար մը կազմելու համար երկսեռ աշակերտաց միամեայ յառաջդիմութեան վրայ:

Հարցաքննութեանց վրայ պիտի խօսինք յաջորդ թիւով. կը ցաւինք միայն թէ՛ վարժարանին Հոգաբարձութիւնը, կամ որ նոյն է, Պ. Հոգաբարձ

ձուն օր մը, գէթ ժամ մը ոտք չը կոխեց հարցաքննութեանց սրահներէն ներս. հոգաբարձու թէ թաղական, ամենքն ալ կը փայլէին իրենց բացակայութեամբ: Ցաւալի է յիշել նաեւ թէ՛ քանի մ'օր ալ երէց ուսուցիչներէն մին՝ հետեւելով հոգաբարձութեան ընթացքին, ինքն ալ բացակայեց պատուակելով թէ՛ իր աւանգած առարկաները չէին հարցաքննուեր այն օրերը:

— Պ. Փասուշեանէսն, հիւանդութեանը չը նայելով՝ երբեմն երբեմն փորձերու գտնուելով կուսուցանէ նորակազմ դերասանական խմբին, մօտերս Սանդրոյիս ողբերգութիւնը ներկայացնելու համար ծովեզերքի Բիրաւիսի նորաչէն թատրոնին մէջ:

Վաղեմի դերասանը, առողջութիւնը խանդարուած, նիւթական անձկութիւնը սոսկալի, կը քաշքշէ իր տիւուր օրերը, կը ճգնի ապրելու իր վերջերս երկասիրած «Տայր Միտիկ Անդէնը» կատակախաղին արդիւնքով:

Փիւնիկի ընթերցողներէն անոնք որ, այդ հրահանգիչ և զուարճալի կատակախաղէն ստացած են երկերկու օրինակ, կը խնդրուի օր առաջ իրենց նուէրները հասցնել դժբաղդ դերասանապետին, որ այս շաբթուան մէջ հանդիպեցաւ նաև ուրիշ դժբաղդութեան մը: Իր բնակարանին մէջ գող մտնելով ցերեկով, կը տանին իր քանի մը կտոր զգեստներն ու բաճկոնակին մէջը դրուած 4 1/2 ռիյալի գումար մը: Ապրիլի Պայ Սիսուայի փողոցապահները:

— Հայ նուագածուաց Խումբը. հակառակ իր մէջ տեղի ունեցած քանի մը փոքրիկ փոփոխութեանց, շոգեպինդ կը գործէ, զիշերային դասընթացքը շարունակելով, կը ջանայ օր առաջ իրագործել նպատակը, որուն համար հիմնուած է արդէն: Իտալացի Վարպետը շատ գոհ, յաճախ հիացումով կը խօսի հայ երիտասարդութեան գեղարուեստասիրական տաղանդին վրայ, եւ յոյս կը յայտնէ թէ՛ քիչ ժամանակի

Հայ նուագածուներու տողանցութիւնը, արեւմտեան ու արեւելեան եղանակներով հնչեցնելով հրապարակը: Այդ ցանկալի օրը շուտով պիտի հասնի, եթէ նորակազմ Խումբը քաջալերանք գտնէ:


Խումբը պէտք ունի նուագարաններու, որոնք առ նուազն 1000 ֆրանգով կարելի է հայթայթել: Արդ, կ'իմանանք թէ խմբին ձեռներէց երիտասարդները գեղեցիկ գաղափարն ունեցած են պատգամաւորութիւն մը զրկելու Տեղոյս մեծանուն Անճնաւորութեան մը քով, բարերարութիւնն ու պաշտպանութիւնը խնդրելու նպատակով: Այժմէն կը խնդակցինք և կը մաղթենք որ իրենց ջանքերը պսակուին յաջողութեամբ:

— «Վերջալոյսի Ձայներ» թրթռուն տիտղոսը կրող գեղեցկատիպ գրքոյկն ստացանք Ազն. հրատարակիչ Օր. Մարի Պէյլէրեանէն: Խրիմեան Հայրիկին վերջալուսային մրմունջները, բաց 'ի «Ձայնչիէվի Յիշատակին» էն, թէ և չունենան երիտասարդութեան տարիներուն խանդըն ու բոցը, ջերմապէս յանձնարարելի են վեհութեամբը նպատակին, որուն համար հրատարակուած են: Այս գրքոյկին վաճառման արդիւնքովը պիտի հիմնուի մօտերս «Արսեմիս» ամսեայ հանդէսը, իգական սեռին անդրանիկ հրատարակութիւնը, Խմբագրութեամբ համակրելի Օր. Մարի Պէյլէրեանի որ ուխտած է պաշտպանելու իր սեռին, այն է, հայ կնոջ իրաւունքները:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

— Նոր Բաղաբ մը. Անգլիական ընկերութիւն մը դնած է Աղեքսանդրիոյ չըջակայքը լայնատարած գետին մը, ուր նպատակ ունի հիմնարկել նոր քաղաք մը, Վիզոօրիա անունով: Այս գետինը մաս առ մաս կը ծախուի ֆէդտանը 20 անգլ. ոսկիի, շաբաթական 2 ոսկի մասնավճարով: Կանխիկ վճարողներուն՝ մէն մի ֆէդտանի համար 2 ոսկի գեղջ կը շնորհուի: Իսկ եկեղե-

բարեգործական հաստատութեանց համար ձրի դեպիսն պիտի բաշխուի ամեն հասարակութեանց, որոնք կը փափազին թաղ մը հիմնել այդ նոր քաղաքին մէջ: Ահաւասիկ մեր Առաջնորդարանին համար կը ներկայանայ գեղեցիկ առիթ մը որմէ զգտուել սարառն, գէթ անցեալին դժբաղդ սխալները դարձունելով ազգային նոր հաստութեալեր կառուածներ ստեղծելու:




ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿ Բ. Ի. ԵՒ ԱՆՈՐ ՊԱՊ ՈՐԳԻՈՑՆ

Հեղինակութիւն

ՈՂՐԱՑԵԱԼ ԴՐԱԿԵՏ ԵՂԻՍՁԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ




Ազգ. Պատմութեան մէկ կարեւոր կէտը լուսաբանող խիստ շահեկան պարունակութեամբ սոյն գիրքը. 198 էջերով որ լրջ տեսած է Հայկական Արաքս» Տպարանէն կը ծախուի թրգթատարի ծախքով 2 1/2 ֆր. ի:

Գնել փափագողք կրնան դիմել հետեւեալ հասցէին.

Impressionnerie Arménienne L'«Arax»

ALEXANDRIE


EGYPTE



Ա Ձ Դ Ե Ր

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մեկշիյե Հայկ. Մեծ Մրճարանին Ետին



Յաճախորդները պիտի գտնեն զով ու օգուէտ տեղ մը, մաքուր սպասարկութիւն, համեղ ու պէս պէս կերակուրներ, քաղցրաւենիք, միրգեր, ըմպելիք ևն. խիստ չափաւոր գիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի կանխիկ վճարումով ու զոհացուցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ՝ ու պիտի տեսնէք նոր ճաշարանին առաւելութիւնը:

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

ՓՈՐԱԳՐԻՉ – ՏՊԱԳՐԻՉ

Կը պատրաստէ փութով ու ճաշակով ամեն տեսակ կնիքներ, դառչուի ու պղինձի վրայ. բրաք, Էսսաւֆիիչ, արծաթ ու ոսկի մոնոխրատներ, հաշունցուցակ, անդէդ, այցեխարս, հասցեխարս, ևն: Սակարկութեան համար դիմել Հայկ. Մեծ Մրճարանը:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapisserie)

Քաղաքիս երեւելի հայ տուներուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ զոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարադոյր, ևն:


Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Մրճարանը:

ՀՍԱԲԱՐՁՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ամեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու պատրաստ, կը վաճառէ. ապրանքները մաքուր, տոկուն ու ձևաւոր. կը մրցի բոլոր օտար վաճառատանց հետ, գիններուն աժանութեան կողմէն:



Փիւնիկ կը ծախուի.

— Աղեխանդրիս. Շէրիֆ Բաշա փողոց, Անկլօ Էթիբսիէն Դրամատան քով, Տիար Բարսեղ Թէլլալեանի խանութը:

— Դանիտէ. Ապտիւլ Ազիզ փողոց, Տիար Կարապետ Երզնկացեանի խանութը: